ԺԼԸ.

Էջմիածնի Կաթողիկոսաց պատմութեան պատկանող կարևոր էջեր կը ներկայացնենք յաջորդաբար։

Խնդրոյն առանցքը կը կազմէ Ղազար ԺԱ. Կաթողիկոս Ջահկեցի (1737–1748 և 1749–1751)։ Իրեն դէմ յարուցուած հակառակութեան պատճառը իր իսկ գործերն են։ Պարտաւորուած էր՝ ըրած չարաշահութեան իբրև տուգանք՝ հատուցանել չորս հազար թուման, ու չունենալով բաւարար դրամ՝ «Լաւ զանօթս աթոռոյն Էջմիա-«նայ զոսկեղէնս և զարծաթեղէնս. զորոց զոմանս վաճառեաց և զոմանս ետ տա-«նիլ ի ծածուկ յայլ տեղի. և տուեալ հարկապետին երկու հազար և հարիւր թու-«ման, փախեաւ ի Կարին[1]»։

Ինչպէս կը տեսնենք՝ դարձեալ չէր կրցած ամբողջութեամբ հատուցանել. ուստի լսելով հարկապետը անոր փախուստը՝ «Կալաւ և կապեաց զամենայն միաբանս աթո-«ռոյն և եդ ի բանտի. կողոպտեաց զամենայն՝ զոր ինչ և եգիտ Էջմիածին. և «մերկացոյց զաթոռն յամենայն զարդուց։ Եւ զի նոքիմբք ոչ վճարէին բովանդակ այն «պարտք, կամեցաւ ի տանջանս արկանել զմիաբանսն. և նոցա ի սպառ անճարա-«ցեալ՝ բողոքեցին առ արքայ, բայց ոչինչ շահեցան։ Այսպա անկեալ ի դրունս մեծա-«մեծաց՝ խնդրեցին փոխ՝ և անհնարին տառապանօք ժողովեալ ետուն զամենայն «հարկապետին և արձակեցին զնա[2]»։

Այս ծանրածանր չարիքներէն միաբանք մեծապէս նեղուած՝ աստ և անդ թուղթեր կը ղրկեն, որպէս զի ազգը Ղազարու տեղ ուրիշ մը կաթողիկոս դնէ։ Ահա այս կէտէն է որ կը սկսի Հ. Միքայէլ իր նամակը։

Գերյարգելոյ Արբայ Հօրդ մերոյ տեառն տեառն Մխիթարայ
Աստուածապանուրեան Վարդապետի

. . . Կաթողիկոսն լուեալ թէ զինքն ոչ կամին գալ աստ, և թէ մին զայլ ոմն ընտրել մինչ ինքն փախուցեալ իցէ ի Շահ թահմազէն, և չէ կարելի վերստին դառնալ ի տեղ իւր, գրեալ է աստ թէ չէ օրէն մինչ կենդանի է կաթողիկոսն, զայլ կաթողիկոս դնել, ապա թէ ոչ՝ բանադրեմ զձեզ։ Եւ ի Էջմիածնայ կողմն եղեալ վարդապետքն զգիր գրեալ աստ, թէ քանի որ Ղազար կաթողիկոսն նս[տ]աւ, պատիժ պատուհասն ի գլխնոյս պակաս չեղաւ։ Վասն որոյ կամ Երուսաղէմէ, Գրիգոր վարդապետն, կամ Յակոբ պատրիարգն Կոստանդինուպօլսոյ, յերկուց զմինն, զորն և ընտ[ր]իցէք և ուղարկիցէք մեզ, հաճելի է։ Բայց պատրիարգն չի ուզեր ելանել աստի. ի կիրակէի մոյ, ի յատեան եկեղեցւոյն ողբերգական կերպիւ պատրիարգն ի գիմաց իւրոց ասացեալ է, Ո՞վ Յակոբ հաբեղայ, ոչ տեսանեմ զքեզ թողուլ զաթոռդ քո զԿոստանդինուպոլիս և գնալ, միայն թէ մեռանիցիմ։ Եւ զԱհակ ահագին նուիրակն վարդապետն մէնզիլով ուղարկեցին առ կաթողիկոսն, թերևս առ ի հաճեցուցանել զմիտս նորին, զի զայլս ընտրիցեն։ Աստ վերստին յայժմ ժանտացաւն սկսաւ արծարծիլ։...

Պատրաստական ծառայ ամենայնի
Հ. Միքայէլ Վ.

Ի յամի տեառն 1747–ին
ի մայիսի 30–ին
[Պոլիս]

---

1. Զամչեան, Պատմ. Հայոց, հատ. Գ. էջ 838։
2. Անդ։